8199	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում, որից՝		0.0	0.0	0.0
8199w	Ժախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը		0.0	X	
8200	Բ. ԱՐՏԱՎԻՆ ԱՊՐԵԼԻ ՌԵՆ, այդ թվում՝		0.0	0.0	0.0
8210	1. ՓՈԽԱՌՈՒՄ ՄԻՋՈՑՆԵՐ, այդ թվում՝		0.0	0.0	0.0
8211	1.1. Արժեքները (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության), որից՝		0.0	X	0.0
8212	- բողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	9121	0.0	X	
8213	- հիմնական գումարի մարում	6121	0.0	X	
8220	1.2. Վարկեր և փոխատվություններ(ստացում և մարում), այդ թվում սոող 8221+սոող 8240		0.0		0.0
8221	1.2.1. Վարկեր, որից՝		0.0	X	0.0
8222	- մատնենի սառառում	9122	0.0	X	

## ՅԱՏՎԱԾ 6

**ՐԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ  
ՏՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԿԱՐԳՄԱՆ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	44641.2	39143.7	5497.5
2100	01	0	0	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b> <b>ԾԱՌԱՅՈՒԹ ԲՆՈՒՅԹԻ ՐԱՄԱՅՆՔԻ</b> <b>ԾԱՌԱՅՈՒԹ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԴ ԲՎՈՒՄ՝</b>	27220.0	27220.0	0.0
2110	01	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկարյութետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝	26890.0	26890.0	0.0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	26890.0	26890.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	19250.0	19250.0	
			4112	-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարմներ	1050.0	1050.0	
			4212	-Ենթագետիկ ծառայություններ	1000.0	1000.0	
			4213	-Կոմունալ ծառայություններ	30.0	30.0	
			4214	-Կապի ծառայություններ	600.0	600.0	
			4215	-Ապահովագրական ծախսեր	150.0	150.0	
			4232	-Դաշտական ծառայություններ	90.0	90.0	
			4234	-Տեղակատվական ծառայություններ	700.0	700.0	
			4235	-Կառավարչական ծառայություններ	660.0	660.0	
			4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	0.0	0.0	
			4241	-Մասնագիտական ծառայություններ	500.0	500.0	
			4252	-Մերժանաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահանջում	600.0	600.0	
			4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	500.0	500.0	
			4264	-Տրանսպորտային նյութեր	1600.0	1600.0	
			4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	50.0	50.0	
			4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	50.0	50.0	
			4823	-Պարտադիր վճարներ	60.0	60.0	
			5113	-Ընթերի և շինությունների կապիտալ վերանորոգում	0.0	0.0	0.0
			5121	-Տրանսպորտային սարքավորումներ	0.0		0.0
			5122	-Վարչական սարքավորումներ	0.0		0.0
2130	01	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝	110.0	110.0	0.0
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	110.0	110.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4231	-Վարչական ծառայություններ	0.0	0.0	
			4232	-Դաշտական ծառայություններ	110.0	110.0	
			4241	-Մասնագիտական ծառայություններ	0.0	0.0	
2150	01	5	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով	0.0	0.0	0.0
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0	0.0	0.0

Տողի NN	Բա-միմ	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խճերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						Վարչական բյուջեն	ֆոնդային բյուջեն
1	2	3	4	5	6	7	8
				այդ թվում ծախսերի վերձանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
			4235	-Կառավարչական ծառայություններ	0.0	0.0	
			5133	-Գեղեցիկական քարտեզագրական ծախսեր	0.0		0.0
2160	01	6	0	Ընդհանուր բնույթի համրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	220.0	220.0	0.0
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի համրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	220.0	220.0	0.0
				այդ թվում ծախսերի վերձանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4211	-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	50.0	50.0	
			4237	-Ներկայացուցչական ծախսեր	50.0	50.0	
			4241	-Մասնագիտական ծառայություններ	100.0	100.0	
			4823	-Պարտադիր վճարներ	20.0	20.0	
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	200.0	200.0	0.0
2220	02	2	0	Քաղաքացիական պաշտպանություն, որից՝	100.0	100.0	0.0
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	100.0	100.0	0.0
				այդ թվում ծախսերի վերձանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100.0	100.0	
					0.0		
2250	02	5	0	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝	100.0	100.0	0.0
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	100.0	100.0	0.0
				այդ թվում ծախսերի վերձանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100.0	100.0	
					0.0		
2300	03	0	0	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎԱՆՎՈՒԹՅՈՒՆ և ՂԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	450.0	450.0	0.0
2320	03	2	0	Փրկարար ծառայություն, որից՝	450.0	450.0	0.0
2321	03	2	1	Փրկարար ծառայություն	450.0	450.0	0.0
				այդ թվում ծախսերի վերձանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100.0	100.0	
				-Բնական աղետներից առաջացած վնասվաճրների կամ վնասների վերականգնում	350.0	350.0	
					0.0		
2400	04	0	0	ՏՏՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝	1977.5	480.0	1497.5
2420	04	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝	480.0	480.0	0.0
2421	04	2	1	Գյուղատնտեսություն	480.0	480.0	0.0
				այդ թվում ծախսերի վերձանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4241	-Մասնագիտական ծառայություններ	480.0	480.0	
2450	04	5	0	Տրանսպորտ, որից՝	3497.5	0.0	3497.5
2451	04	5	1	ճանապարհային տողանակում	3497.5	0.0	3497.5

Տողի NN	Քա-ԺԱՄ	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածները	Ընդամենը (ս.7 +ս.8)	այլ թվում՝	
						Վարչական բյուջեն	ֆոնդային բյուջեն
1	2	3	4	5	6	7	8
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
			4235	-Կառավարչական ծառայություններ	0.0	0.0	
			5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	3297.5	X	3297.5
			5134	- Նախագծահետազոտական ծախսեր	200.0		200.0
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	-2000.0	0.0	-2000.0
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-2000.0	0.0	-2000.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			8411	Դողի իրացումից մուտքեր	-2000.0		-2000.0
				.....	0.0		
2500	05	0	0	ՇՐՋԱՎԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՈԱՍԽԹՅՈՒՆ, այլ թվում՝	3553.0	3053.0	500.0
2510	05	1	0	Աղքահանում, որից՝	3500.0	3000.0	500.0
2511	05	1	1	Աղքահանում	3500.0	3000.0	500.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4213	-Կոմունալ ծառայություններ	3000.0	3000.0	
			5122	-Վարչական սարքավորումներ	500.0		500.0
2530	05	3	0	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար, որից՝	53.0	53.0	0.0
3531	05	3	1	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	53.0	53.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4823	-Պարտադիր վճարներ	53.0	53.0	
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒԽԱԼ օպերատորներ, այլ թվում՝	5100.0	1600.0	3500.0
2630	06	3	0	Զրամատակարարում, որից՝	2400.0	400.0	2000.0
2631	06	3	1	Զրամատակարարում	2400.0	400.0	2000.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4212	-Եներգետիկ ծառայություններ	400.0	400.0	
			5112	- Շենքերի և շինությունների կառուցում	2000.0		2000.0
2640	06	4	0	Փողոցների լուսավորում, որից՝	2700.0	1200.0	1500.0
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	2700.0	1200.0	1500.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4212	-Եներգետիկ ծառայություններ	1000.0	1000.0	
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	200.0	200.0	
			5112	- Շենքերի և շինությունների կառուցում	1500.0		1500.0
2700	07	0	0	ԱԱՊԱՎԱՐԱՌՈՒԹՅՈՒՆ, այլ թվում՝	300.0	300.0	0.0
2762	07	6	2	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	300.0	300.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
			4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	300.0	300.0	

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման քաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						Վարչական բյուջեն	Ֆոնդային բյուջեն
1	2	3	4	5	6	7	8
				.....	0.0		
2800	08	0	0	ՀԱՍԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ, այդ թվում՝	1100.0	1100.0	0.0
2824	08	2	4	Այլ նշակութային կազմակերպություններ	900.0	900.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0.0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	900.0	900.0	
				.....	0.0		
2830	08	3	0	Ուղիղ և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ, որից՝	0.0	0.0	0.0
2833	08	3	3	Տեղեկատվության ձեռքբերում	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0.0		
			4234	-Տեղակատվական ծառայություններ	0.0	0.0	
				.....	0.0		
2842	08	4	2	Ցաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	200.0	200.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0.0		
			4819	-Նվիրատվություններ այլ շահույթ չինտապնդող կազմակերպություններին	200.0	200.0	
2900	09	0	0	Կրթություն, այդ թվում՝ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+ տող2970+տող2980)	950.0	950.0	0.0
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝	950.0	950.0	0.0
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	950.0	950.0	
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0.0		
			4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտուրային կազմակերպություններին	950.0	950.0	
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	1800.0	1800.0	0.0
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	1800.0	1800.0	0.0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	1800.0	1800.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0.0		
			4726	-Հուղարկավորության նպաստներ բյուջեից	1050.0	1050.0	
			4729	Այլ նպաստներ բյուջեից	750.0	750.0	
3100	11	0	0	ՔԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՎՈՂ ՊԱՐՈՒՍԱՅԻՆ ՖՈՆԴ, այդ թվում՝	1990.7	1990.7	
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝	1990.7	1990.7	
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	1990.7	1990.7	
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների	0.0		
			4891	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	1990.7	1990.7	



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**  
23 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 5-Ն

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջների՝ **ավագանին որոշում է.**

- Հաստատել Պտղնի համայնքի սեփականություն հանդիսացող հողերից 2019 թվականի ընթացքում օտարման ենթակա հողամասերի ցուցակը՝ համաձայն հավելվածի:
- Հողամասերի օտարումից առաջացած միջոցներն ուղղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծմանը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Զեռնպահ -0

ԱԶԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՄՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԱՌԱՋԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**



ՀԱՎԵԼՎԱԾ  
Պատղի համայնքի ավագանու 2019թ թվականի  
Խոնվարի 23-ի N 5-Ն դրումն

### ՑՈՒՑԱԿ

#### ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՍՅՈՒՆ ՀՈՐՄԱՏԱԳՈՐԾ 2019 թՎԱՄԱՍՆԻ ԸՆԹԱՅՑՔԻ ՕՏԱԿԱՆԱ ԵՆԹԱԿԱ ՀՐՈՂԱՄԱՍՆԵՐԻ

Սպասարկի խորցին (գումակու կայրը), Ծածկագիրը	Ապահովագրական բառ	Հողագոյնի նպատակավոր և գործառնական և սահմանադրությանը համապատասխան	Հողագոյնի օպտագործման նպատակը	Հողագոյնի նպատակավոր և գործառնական և սահմանադրությանը համապատասխան	Հողագոյնի նպատակի նշանը սերվիսառների առկայությանը				
Պատղի համայնք, գ. Պատղի 3 հրող, թիվ 2, 07-054-0026-0036	112.0	բնակչապետի բնակչենի կառուցապատճենան	Օժանդակ շինության կառուցապատճեն համար	Հոժանդակ շինության կառուցապատճեն համար	Հոժանդակ շինության անամը	Հոժանդակ անամը	Հոժանդակ անամը	Հոժանդակ անամը	Հոժանդակ անամը
Պատղի համայնք, գ. Պատղի Պատղի հին առ 5-րդ թաղամաս թիվ 64/1, 07-054-0220-0036	150.3	բնակչապետի բնակչենի կառուցապատճենան	Օժանդակ շինության կառուցապատճեն համար	Օժանդակ անամը	Օժանդակ անամը	Օժանդակ անամը	Օժանդակ անամը	Օժանդակ անամը	Օժանդակ անամը
Պատղի համայնք, Պատղի Պատղի 07-054-0311-0023	2000.0	Գյուղատնտեսական, այլ հողատակը	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը
Պատղի համայնք, 07-054-0315-0169	1600.0	Գյուղատնտեսական, այլ հողատակը	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը
Պատղի համայնք, 07-054-0327-0030	3626.8	Գյուղատնտեսական, վարեհանող	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը
Հայաստանի Հանրապետության սննդապահություն, Պատղի համայնք, 07-054-0330-0054	9417.3	Գյուղատնտեսական, վարեհանող	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը
Պատղի համայնք, 07-054-0317-0032	6358.0	Գյուղատնտեսական, վարեհանող և այլ հողատակը	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական գործունեություն	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը	Գյուղատնտեսական անամը
Պատղի համայնք, 07-054-0312-0010	1527.3	Գյուղատնտեսական, արտօն	Գյուղատնտեսական գործունեություն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն

Պատղի համայնքի ղեկավար՝

Ա. Վիրաբյան



Պատղի համայնքի ղեկավար՝

Վ. Վարդիկյան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 6-Ն

#### ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների՝ **ավագանին որոշում է.**

- Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի «Պտղնի համայնքի ավագանու կանոնակարգի ընդունման մասին» N 36-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Զեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳԱՆ ԺԱՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՋՅԱՆ ՍԱՐԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՋԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ

Պողոսի համայնքի ավագանու

2016 թվականի նոյեմբերի 25-ի N 36-Ն որոշման

Փոփոխությունը համայնքի ավագանու 2019

թվականի հունվարի 23-ի N 6-Ն որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՊԵՂՆԻ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱԿԱԳԱԽՈՒ ԿԱՂՈՒՄԱԿՈՒ**

2016 թվական

## **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և համայնքի բնակչության քարեկցության, քարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ իրականացնում է ժողովրդի իշխանությունը, օրենքի շրջանակներում ապահովում համայնքային խնդիրների լուծումը և տնօրինում համայնքի սեփականությունը:

Համայնքի ավագանին կազմված է 7 անդամներից, գործում է գյուղ Պտղնի 1-ին փողոց թիվ 6 հասցեում:

### **1. Նպաւուկը**

1. Սույն կանոնակարգն ընդունված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա:

2. Սույն կանոնակարգը նպատակառությամբ է Պտղնի համայնքի ավագանու, ավագանու հանձնաժողովների և անդամների գործառույթների արդյունավետ կատարմանը, խչպես նաև նրանց փոխգործակցությանը Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) հետ տեղական ինքնակառավարման իրականացման գործում:

3. Սույն կանոնակարգը կարգավորում է ավագանու նիստերի անցկացման վայրը, կարգը, խչպես նաև ավագանու որոշումների նախագծերի ներկայացման, ըննարկման, ընդունման ու հրապարակման կարգը:

### **2.Համայնքի ավագանու գործունեության կազմակերպումը**

1. Համայնքի ավագանին գործում է սույն կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, խչպես նաև իր ստեղծած մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

2. Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ փետրվարի 11-ին, մարտի 11-ին, ապրիլի 10-ին, հունիսի 07-ին, հուլիսի 10-ին, սեպտեմբերի 06-ին, հոկտեմբերի 14-ին, դեկտեմբերի 13-ին: Կարող են անցկացվել նաև արտահերթ նիստեր:

3. Համայնքի դեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված կարգով գործունեությունն իրականացնելու համար:

4. Համայնքի ավագանու աշխատանքային գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ ըննարկման և կողեկտիվ լուծման սկզբունքների վրա:

5. Համայնքի ավագանու աշխատանքային լեզուն հայերենն է:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԽՍՏԵՐԸ

### 3. Նորընսիր ավագանու առաջին նիստը

1. Առաջին նիստի բացման առթիվ ողջոյնի ելույթով հանդես է գալիս համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը, որը և վարում է նիստը:

2. Նիստը վարողը ներկայացնում է ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անոն ազգանոնք, մասնագիտությունը և կուսակցական պատկանելիությունը:

3. Ավագանու անդամը, հանդիսավոր պայմաններում, նորընտիր ավագանու առաջին նիստի ժամանակ երդում է. "Ես՝ \_\_\_\_\_, ստանձնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնքի ավագանու անդամի լիազորությունները, երդում եմ իմ ողջ գործունեության ընթացքում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու օրենքով, անշեղորեն պահպանել Հայաստանի Հանրապետության քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, գործել ի նպաստ համայնքի զարգացման ու բարօրության":

4. Երդումը տրվում է անհատական կարգով, տեքստի ընթերցմամբ:

5. Ավագանու անդամը ստորագրում է իր ընթերցած տեքստը:

### 4. Նիստի օրակարգի բնակրկման կարգը

1. Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները՝ աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տասը օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան երկու տոկոսը:

2. Նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին:

3. Ավագանու նիստը սկսվում է օրակարգի հաստատմամբ

4. Ավագանու նիստի ժամանակ օրակարգում ներառված հարցերի հերթականությունը կարող է փոխվել ավագանու որոշմամբ:

5. Օրակարգում ընդգրկված որոշման նախագծերը քննարկվում և քվեարկվում են առանձին առանձին:

### 5. Համայնքի ավագանու նիստերի գումարման կարգը

1. Նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի ստուառերի:

2. Ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, օրակարգում ընդգրկված հարցը կարող է տեղափոխվել հաջորդ նիստերի ըննարկմանը:

#### **6.Համայնքի ավագանու արտահերթ նիստը**

1. Արտահերթ նիստ իրավիրելու մասին ավագանու անդամներին տեղյակ է պահպում համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

2. Ավագանու արտահերթ նիստը համարվում է ավարտված, եթե սպառվել են օրակարգի բոլոր հարցերը:

3. Արտահերթ նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ:

4. Արտահերթ և հերթական նիստերում ըննարկվող հարցերի որոշման նախագծերի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվում են համանման պահանջներ:

#### **7. Նիստերի իրավագորությունը**

1. Ավագանու նիստը սկսվելուց առաջ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը անց է կացնում նիստին ներկայացած և քվեարկություններին մասնակցած ավագանու անդամների գրանցում:

2. Գրանցումներն արվում են հատուկ մատյանում, որտեղ նշվում է նաև նիստից ավագանու անդամի բացակայելու պատճառը:

3. Համայնքի ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին:

4. Նիստի իրավագորությունը վավերացվում է նաև նիստի ընդհատումներից կամ ընդմիջումներից հետո:

#### **8. Դոնքաց և դոնփակ նիստերը**

1. Համայնքի ավագանու նիստերը դոնքաց են: Համայնքի դեկավարի իրավերով ավագանու նիստին մասնակցում են աշխատակազմի աշխատակիցները:

2. Համայնքի ավագանուն նիստին կարող է իրավիրել և լսել ցանկացած անձի:

3. Ավագանու որոշումներն ու ուղերձները կարող են իրավարակվել ուղիղություն, հեռուստատեսությամբ, մամուլում, հասարակական վայրերում կամ այլ ձևով՝ ըսակչության այն մատչելի դարձնելու համար:

4. Սուանձին դեպքերում դոնփակ նիստի առաջարկով կարող է հանդես գալ համայնքի դեկավարը կամ ավագանու անդամը: Ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող է անցկացվել դոնփակ նիստ:

5. Դոնփակ նիստում, բացի ավագանու անդամներից, նիստը վարողից և արձանագրողից իրավունք ունեն ներկա գտնվել միայն ավագանու որոշմամբ իրավիրված անձինք:

#### **6. Գրնահան նիստում ընդունված որոշումները հաստատվություն են:**

## ***9. Ավագանու նիստի վարման կարգը***

Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը. նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:

### ***Նիստը վարողը՝***

ա) բացում, ընդհատում և փակում է նիստը,

բ) ձայն է տալիս ելույթ ունեցողներին,

գ) կազմակերպում է քվեարկության անցկացումը և դրանց արդյունքների հրապարակումը,

դ) կարող է ընդմիջել ելույթները՝ նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով:

## ***10. Ավագանու նիստերի արձանագրությունը***

1. Համայնքի ավագանու նիստի արձանագրությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:

2. Նիստերի արձանագրությունները պահպանվում են համայնքի նատավայրում:

3. Նիստերի ավարտից հետո՝ 3 օրվա ընթացքում, այդ նիստերի արձանագրությունները վավերացվում են նիստին ներկա ավագանու անդամների կողմից:

## ***11. Բնակչության մասնակցությունը***

1. Բնակչությունը իրավունք ունի մասնակցելու համայնքի ավագանու նիստերին: Համայնքի ղեկավարը պարտավոր է ապահովելու անհրաժեշտ աշխատանքային պայմաններ բնակչության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և լրատվամիջոցների մասնակցության համար: Ցանկացած անհատ կամ խումբ, ով ցանկանում է դիմել ավագանուն հերթական նիստի ժամանակ օրակարգային հարցերի վերաբերյալ, պետք է իր հարցադրումը գրավոր ներկայացնի աշխատակազմի քարտուղարին նախքան նիստի սկսելը: Սակայն, ավագանին ինքն է որոշում նիստի ժամանակ անհատին կամ խմբին լսելու հարցը:

2. Բնակչության հարցադրումները և առաջարկությունները օրակարգային ցանկացած հարցի վերաբերյալ թույլատրվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայնների մեջ երրորդով: Ավագանու հերթական նիստերի վերջում հատկացվում է 30 րոպե ժամանակ՝ քաղաքացիների կողմից ավագանուն ուղղված ցանկացած հարցադրմանը, որը վերաբերում է համայնքին, պատասխանելու համար:

3. Հարցադրումների և առաջարկությունների հեղինակը ներկայանում է՝ նշելով իր անունը և ազգանունը: Համայնքի ղեկավարը հերթականությամբ խոսք է տրամադրում ելույթ ունենալ ցանկացողներին:

4. Հարցադրումների և առաջարկությունների հիման վրա ավագանին նիստին ներկա անդամների ձայնների մեծամասնությամբ կարող է դիմել հանձնաժողովներին կամ համայնքի ղեկավարի աշխատակազմին լրացնիչ տեղեկատվություն տրամադրելու հարցի դիտարկման համար:

5. Բնակիչները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները պարտավոր են գրադեցնել իրենց համար նախատեսված տեղերը և հետևել սույն կանոնակարգի 9-րդ հոդվածով հաստատված ավագնու նիստի վարման կարգին:

### 3.ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

#### 12. Համայնքի ավագանու նիստում հարցերի բնարկման կարգը

1. Հարցերի քննարկումը սկսվում է նիստի օրակարգի հաստատումից հետո: Օրակարգային հարցի քննարկումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ՝
  - ա) հիմնական գեկուցողի ելույթը.
  - բ) հարցեր գեկուցողին.
  - շ) հարակից գեկուցողի ելույթը.
  - դ) հարցեր հարակից գեկուցողին
  - ե) մտքերի փոխանակություն.
  - զ) եզրափակիչ ելույթներ.
  - է) քվեարկություն:
2. Որպես հիմնական գեկուցող հանդես է գալիս տվյալ հարցի հեղինակը, իսկ համայնքի բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող քննակիչների ընտրած ներկայացուցիչը, իսկ որպես հարակից գեկուցող՝ հանձնաժողովի ներկայացուցիչը:
3. Եթե հարցի քննարկումը ընդմիջվել է, ապա ընդմիջման ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից, որից այն ընդմիջվել էր:
4. Հարցի քննարկման ընթացքում հատկացվում են՝
  - ա) գեկուցման համար՝ մինչև 5 րոպե
  - բ) հարցերի համար՝ մինչև 3 րոպե
  - շ) ելույթների համար՝ մինչև 5 ական րոպե
  - դ) եզրափակիչ ելույթի համար մինչև 5 ական րոպե
5. Քննարկվող հարցի վերաբերյալ գեկուցողի առաջարկությունը քվեարկության է դրվում առաջին հերթին: Զեկուցողի առաջարկությունը չընդունվելու դեպքում քվեարկվում են մտքերի փոխանակության ժամանակ արված մյուս առաջարկությունները: Այդ առաջարկությունների քվեարկման հաջորդականությունը որոշում է համայնքի ղեկավարը:

#### 13. Հարցեր լրացնելու կարգը

1. Հարցեր տալու համար ավագանու անդամների հերթագրումը իրականացնում է նիստը

2. Հարցերը տրվում են ըստ հերթագրման հաջորդականության, նիստը վարողի հայտարարությամբ:

3. Եթե հարց տվողի և զեկուցողի միջև սկսվում է բանավեճ, ապա նիստը վարողը կարող է դադարեցնել հարցադրումը:

4. Մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողին հարցերը չեն տրվում:

#### ***14. Մտքերի փոխանակության կարգը***

1. Մտքերի փոխանակության ժամանակ ավագանու յուրաքանչյուր անդամին ելույթ ունենալու հնարավորություն է տրվում:

2. Ավագանու անդամը կարող է նույն հարցի շուրջ երկրորդ անգամ ելույթ ունենալ միայն այն դեպքում, եթե ելույթով հանդես են եկել մյուս բոլոր ցանկություն ունեցողները:

3. Մտքերի փոխանակությանը, բացի ավագանու անդամներից և համայնքի ղեկավարից, այլ անձինք կարող են մասնակցել միայն ավագանու համաձայնությամբ:

4. Ավագանու անդամները ելույթ ունենալու ցանկությունը հայտնում են նստած տեղից ձեռք բարձրացնելու միջոցով կամ համայնքի ղեկավարին նախապես գրավոր իրազեկման միջոցով:

5. Ելույթ ունեցողները հանդես են գալիս նիստը վարողի հայտարարությամբ:

6. Համայնքի ղեկավարը դադարեցնում է համայնքի ավագանու ելույթը, եթե վերջինս գերազանցում է իրեն հատկացված ժամանակը նախազգուշացումից հետո:

#### ***15. Որոշումների ընդունումը***

1. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով:

2. Ավագանու քվեարկությանը կարող են դրվել միայն սույն կանոնակարգով սահմանված կարգով ավագանու անդամներին բաժանված և ընսարկված նախագծերը:

3. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են:

4. Համայնքի ավագանու որոշումը կնքում է համայնքի ղեկավարը:

#### ***16. Քվեարկության անցկացման կարգը***

1. Նիստը վարողը քվեարկությունից առաջ կրկնում է քվեարկության դրվող առաջարկությունները, ճշում է դրանց ձևակերպումները և հիշեցնում է նաև, թե ձայների ինչ բանակա՞լ է ընդունվում որոշումը:

2. Քվեարկությունը իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ: Զայները հաշվում

3. Ավագանու անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ, ձեռնպահ:
4. Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը իրապարակում է քվեարկության արդյունքները:

#### 4. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԸ

##### **17. Համայնքի ավագանու անդամների իրավունքները**

Համայնքի ավագանու անդամն իրավունք ունի՝

1. հարցելու ուղղել համայնքի դեկավարին և ստանալ բանավոր կամ գրավոր պատասխան ավագանու հաջորդ հերթական նիստի ժամանակ, եթե ավագանին այլ որոշում չի ընդունում.
2. հնարավորության դեպքում մասնակցել ավագանու վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև փորձի փոխանակման այցերին:

##### **18. Համայնքի ավագանու անդամի պարտականությունները**

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրության ուղղված համոզմունքով:

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1. մասնակցել ավագանու այն հանձնաժողովների նիստերին, որոնց կազմում նա ընդգրկված է.
2. նախապես ծանոթանալ իրեն փոխանցվող ըննարկման ենթակա նյութերին.
3. ծանոթանալ քաղաքացիներից ստացված դիմումներին և օրենքով սահմանված կարգով պատասխանել դրանց.
4. իրազեկ լինել տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենսդրությանը.
5. հետևել համայնքի ավագանու և աշխատակազմի գործունեությանը վերաբերող նյութերի լրացրանմանը տեղական գանգվածային լրատվամիջոցներում.
6. առաջնորդվել համայնքի ավագանու հաստատված կանոնակարգով

##### **19. Համայնքի ավագանու նիստերից անհարգելի բացակայելու դեպքում ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը**

1. Ավագանու անդամների մասնակցությունը նիստերին ու քվեարկություններին հաշվառում է աշխատակազմի քարտուղարը:

2. Աշխատակազմի քարտուղարը եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին տեղեկանք է տալիս նախորդ նիստերից կամ քվեարկություններից իրենց բացակայության մասին:

3. Նիստերից ու քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին ավագանու անդամը տեղեկացնում է աշխատակազմի քարտուղարին: Աշխատակազմի քարտուղարը ավագանու նիստի ժամանակ իրապարակում է ավագանու անդամի բացակայության պատճառը, որը և սուծանառություն է:

4. Ավագանու անդամը նիստերից կամ քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին աշխատակազմի քարտողարին, սույն կանոնակարգով սահմանված կարգով, չտեղեկացնելու դեպքում բացակայությունը համարվում է անհարգելի և արձանագրվում է համապատասխանաբար: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ աշխատակազմի քարտողարին ներկայացվում է անաշխատունակության թերթիկ կամ տեղեկանք թժկից:

5. Աշխատակազմի քարտողարի կողմից տարվող հաշվառման հիման վրա, համայնքի դեկավարը կամ ավագանու անդամը հերթական նիստի ըննարկմանն է ներկայացնում ավագանու որոշման նախագիծը՝ մեկ տարվա ընթացքում նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից ավագանու անդամի բացակայելու անհարգելի համարելու մասին: Որոշման նախագծին կցվում է նիստերից կամ քվեարկություններից ավագանու անդամի բացակայության արձանագրված պատճառները:

6. Ավագանու անդամն առնվազն 7 օր առաջ գրավոր տեղեկացվում է ավագանու նիստում իր բացակայությունների հարցի ըննարկման մասին: Ավագանու անդամի բացակայության դեպքում, հարցի ըննարկումը հետաձգվում է մինչև հաջորդ հերթական կամ արտահերթ նիստը, որտեղ այն ըննարկվում է անկախ նրա ներկայությունից:

7. Յուրաքանչյուր ավագանու անդամի բացակայությունների վերաբերյալ որոշման նախագիծը ըննարկվում է առանձին՝ սույն կանոնակարգի 3-րդ գլուխ 12-րդ բաժնով սահմանված կարգով: Ըննարկման ընթացքում ավագանու անդամը կարող է ելույթ ունենալ, պատասխանել հարցերին, հանդես գալ 5 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:

8. Նիստերի կամ քվեարկությունների կեսից ավելիին ավագանու անդամի բացակայելու անհարգելի համարելու մասին համայնքի ավագանու որոշումն ընդունվում է նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

## **20. Շահերի բախում**

1. Ավագանու անդամը չի կարող մասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քոյր, եղբայր, երեխա) շահերին:

2. Եթե առկա է վերը նշված հանգամանքներից որևէ մեկը, ապա համայնքի ավագանին տեղեկացվում է դրա մասին նախքան տվյալ հարցի ըննարկման և քվեարկությանը սկսելը:

3. Եթե շահերի բախման առկայության դեպքում ի հայտ են գալիս վիճահարույց հանգամանքներ, ապա համայնքի ավագանին հետաձգում է որոշման կայացումը՝ լրացնիչ պարզաբանումներ կատարելու նպատակով:

## **21. Հայաստանի Հանրապետության և օգտարկելոյա քաղաքացիներին համայնքի պարփակոր քաղաքացի կոչում շնորհելու(զրկելու) կարգը**

Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը պատվավոր կոչում է, որը նախատեսված է

Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը շնորհվում է հետևյալ կարգով՝

1. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը արժանանում են, անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային կամ այլ դրույթունից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անքասիր աշխատանքով կամ բացառիկ մեծ վաստակով նպաստել են համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, բացառիկ ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:

2. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (գրկելու) առաջարկը ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ղեկավարը։ Համայնքի ղեկավարին նման առաջարկով կարող են դիմել ավագանու անդամները, հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, մշակութային, գիտական, կրթական կազմակերպությունները։

3. Առաջարկ ներկայացնողը պարտավոր է հիմնավորել այն, համակողմանիորեն լուսաբանել համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործոնեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը։

4. Ստացված առաջարկությունները ըննարկում է համայնքի ավագանին, և նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին։

5. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձանց տրվում է վկայական։

6. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (գրկելու) մասին համայնքի ավագանու որոշումը իրավարակվում է, հնարավորության դեպքում լուսաբանվում է տեղական գանգվածային լրատվության միջոցներով։

## 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՆՁԱԺՈՂՈՎՆԵՐԸ

### 22. ՀԱՆՁԱԺՈՂՈՎՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ։

2. Հանձնաժողովները ստեղծվում են որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական ըննարկման և դրանց վերաբերյալ համայնքի ավագանու եզրակացություններ տալու նպատակով։

3. Հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ։

### 23. Մշտական հանձնաժողովները և նրանց գործունեությունը

1. Մշտական հանձնաժողովները կարող են լինել՝

ա) գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով։

բ) սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով.

գ) իրավական հարցերի մշտական հանձնաժողով.

դ) ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

ե) ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով.

3. Իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում հանձնաժողովները կարող են աշխատանքի մեջ ներգրավել փորձագետների և խորհրդատունների, որոնք իրենց մատուցած ծառայությունների դիմաց կարող են վարձատրվել համայնքի բյուջեից:

#### **24. Ժամանակավոր հանձնաժողովը և նրա գործունեությունը**

1. Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են առանձին որոշման նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին ավագանուն եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:

2. Ավագանին ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում է նրա խնդիրները, գործունեության ժամկետը և աշխատակարգը:

3. Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը սահմանված ժամկետում գելուցում է ավագանու նիստում:

#### **25. Հանձնաժողովի աշխարհանքների համակարգումը**

1. Մշտական հանձնաժողովի աշխատանքները համակարգվում են իր կողմից ընդունված աշխատակարգի միջոցով: Հանձնաժողովի կազմից ընտրվում է հանձնաժողովի նախագահ, եթե աշխատակարգով այլ բան նախատեսված չէ:

2. Հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատվում է հանձնաժողովի նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

3. Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե դադարել են նրա որպես ավագանու անդամի լիազորությունները:

#### **4. Հանձնաժողովի նախագահը՝**

ա) նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.

բ) գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստերը.

գ) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.

դ) ավագանու նիստին է ներկայացնում հանձնաժողովի եզրակացությունները և առաջարկությունները ուսումնամիջվող հարցի վերաբերյալ:

ե) ընթացք է տալիս և պատասխանում է հանձնաժողովին ուղղված դիմումներին:

5. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում են համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

1. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում համայնքի ավագանու նստավայրում: Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել հանձնաժողովի որոշմամբ:

2. Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է ըստ անհրաժեշտության՝ նիստը նախաձեռնողի սահմանած ժամկետում, համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

3. Ժամանակավոր հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կողմից սահմանած ժամկետներում:

### **27. Հանձնաժողովի նիստերի անցկացման կարգը**

1. Հանձնաժողովի նիստում կարող են ներկա գտնվել ավագանու անդամները, համայնքի ղեկավարը և հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք:

2. Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երեք օր առաջ:

### **28. Հանձնաժողովի նիստում ընսարկումների կազմակերպման և որոշումների ընդունման կարգը**

1. Հանձնաժողովի նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում:

Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

ա) հիմնական գեկուցողի ելույթը.

բ) հարցեր հիմնական գեկուցողին.

գ) հարակից գեկուցողի ելույթը (եթե այդպիսիք կան).

դ) հարցեր հարակից գեկուցողին.

ե) մտքերի փոխանակություն.

զ) հիմնական գեկուցողի եզրափակիչ ելույթը.

2. Հանձնաժողովի նիստում յորաքանչյոր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարման ավարտից հետո:

3. Նիստում քվեարկությունները կատարվում են միայն տվյալ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:

4. Հանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց:

5. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

6. Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

### **6. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ**

### **29. Բյուջեի նախագծի ընսարկման կարգը**

1. Համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանուն է ներկայացնում համայնքի ռելակսատուր: Բյուջեի նախագիծը ներկայացնում է բյուջեի հանդեպ համայնքի համայնքի ռելակսատուր:

ա) համապատասխան հանձնաժողովի՝ ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.

բ) ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

2. Համայնքի ավագանու անդամները համայնքի ղեկավարին և մյուս գեկուցողներին հարցեր են տալիս սույն կանոնակարգի 3-րդ գլխի 12-րդ բաժնով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն սույն կանոնակարգով սահմանված կարգով:

### ***30. Համայնքի բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման և քննարկման ժամկետները***

1. Համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ անգամ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:

2. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

3. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է առողջառական մասնագիտացված եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:

### ***31. Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը, բովանդակությունը և քննարկման կարգը***

1. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է՝

ա) տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ, որանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև.

բ) տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին համապատասխան հիմնավորումներով.

գ) տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և որանց սպասարկման վերաբերյալ.

դ) այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

2. Համայնքի ավագանու նիստում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներկայացնում է համայնքի ղեկավարը: Զեկուցումներով կարող են հանդես գալ՝

ա) համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.

բ) ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

3. Համայնքի ավագանու անդամները համայնքի ղեկավարներին և մյուս գեկուցողներին հարցեր են տալիս սույն օրենքի 3-րդ գլուխ 12-րդ բաժնով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

4. Մտքերի փոխանակության ավարտից հետո քվեարկության է դրվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ավագանու որոշման նախագիծը:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### **32. Կանոնակարգի փոփոխությունները**

1. Սույն կանոնակարգը կարող է փոփոխվել համայնքի ավագանու որոշմամբ: Ցանկացած կանոնակարգային փոփոխություն պետք է համահոնչ լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Տեղական խնդիրակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերին:

2. Փոփոխությունների ընդունումը պահանջում է ավագանու նիստին ներկա անդամների ձայների ավելի քան երկու երրորդը:

### **33. Կանոնակարգի ուժի մեջ մղնելը**

Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: